

# Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆ

ԵՒ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԽԻՆ 45




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Բան



# ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ՀԱՆՔԻՏ هانراكيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 45 || 5 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

## ՄԱՅՐԻԿՐՆ ԼԱՐՅՈՒՆԸ

ԱՆԻՒԼՆԷՆ

Կը պառկեր ժիրայր  
Տա՛մ անկողնոյն մէջ,  
Իր կուրծքը երկար  
Կ'ըներ ելեւիջ :

Մայրիկըն աղուոր ,  
Մազերով ցիւր ցան ,  
Մօտեցաւ անոր ,  
Անեւուկ , անձայն :

Կամաց , զողունի  
Համբոյրով մը նուշ ,  
Արքնցուց զանի  
Իր բունեն անուշ :

« Աչբերդ բաց նայիմ ,  
« Հոգեակըս , ժիրայր ,  
« Հարցում մը ունիմ  
« Ես քեզի համար

« Բայց սուս չի զուրցես ,  
« Մեզմէ որերնի՞ս  
« Շասկէկ կը սիւրես .  
« Հայրիկը՞դ քեզի » :

Տղեն , լուռ համակ ,  
Այս հարցին առջեւ ,  
Քաշեց իր վերմակ  
Գլխիկին վերեւ :

Հ. Ս. ՔԵՐԹՄԷՆԵԱՆ

## ԱՌԱԾՆԵՐ ՈՒ ԱՌԱԿՆԵՐ

### ԲԱՐԵԿԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ

(Շարունակութիւն 44րդ Խիւէն)

Ոչինչ աւելի հասարակ քան բարեկամի անունը, ոչինչ աւելի հազուագիւտ քան բուն իսկ բարեկամը:

Երանի անոր որ, իր կեանքին մէջ, կրնայ գտնել բարեկամի մը ստուերը, կ'ըսէր, Մէնանտորի կատարեղութեան մէջ, երիտասարդ մը որ չէր համարձակեր հաւատալ այնքան թանկագին բարիքի մը իրականութեան:

Արիստոտէլ կ'ըզէր. Ո՛վ իմ բարեկամներս, չիկայ բնաւ բարեկամ. եւ կատոն կ'ըսէր թէ այնքան բան պէտք էր ընելու համար բարեկամ մը, որ այս պատահածը չի սիրտի հանդիպեր երեք դարու մէջ:

Բարեկամը ընկերակցութեան աղէկ անասուն է, կ'ըսէր Պլուտարքոս, բայց ոչ երամակի անասուն: Շատ ճամարիտ դիտողութիւն, զի անուանի բարեկամութիւններ միայն երկու անձերու միջեւ գոյութիւն ունեցած են:

Բաւական մեծ հրաշք մ'է ինքզինքը երկապատկել (redoubler) ըսած է Մոնդէյն. անոր բարձրութիւնը չեն ճանչեր անոնք որք կ'իստին զիրենք եռապատկելու վրայ:

Ծանօթ է Ծանփօրի սա խորհրդաւոր սրաբանութիւնը. Աշխարհիս մէջ՝ երեք տեսակ բարեկամ ունիք. ձեր բարեկամներ որք ձեզ կ'սիրեն, ձեր բարեկամներ որք անհոգ են ձեր մասին եւ ձեր բարեկամներ որք ձեզ կ'ատեն:

Աւա՛ղ. ինչո՞ւ համար պէտք է որ այս սիրելի բարեկամներ որոնց մենք կուտանք մեր վստահութիւնը, ըլլան միշտ միայն սիրելի թշնամիներ:

Ան՝ որ կ'դադրի բարեկամ ըլլալէ երբեք բարեկամ չի եղած:

Այս գեղեցիկ առածասոյթը կ'գտնուի յունարէն լեզուով, Ոսկեբարանին երրորդ ճառին մէջ, որ զայն ընդլայնած է, ըսելով թէ բարեկամութեան նկարագիրն է երբեք չի փոխուիլ. և թէ որ ո եւ է մէկը անհաւատարիմ է անձի մը որուն հետ կապուած էր, ան կ'յայտարարէ այդ ընթացքով թէ չէր սիրեր բնաւ ճամարտապէս, զի եթէ անոր բարեկամն եղած ըլլար,

այնպէս մնացած պիտի ըլլար : Աս ճիշդ այն մտածումն է, զոր Հայր տը Տէվրիլ բացատրած է այնքան ճարտար ու յաջողակ կերպով մը, իր քարոզներէն միոյն մէջ :

«Բարի բարեկամը հարիւր ազգականներէ աւելի կ'արժէ» :

Աս առակը իրաւացի է սա միւսին մէջ. — Շատ ազգական ու քիչ բարեկամ :

Տըլիլ ըսած է.

«Ճակատագիրը կ'ընէ ազգականները, ընտրութիւնը կ'ընէ բարեկամները» :

Տօրա ըսած էր Տըլիլէն առաջ.

«Դիպումն է որ կ'ընէ եղբայրները, եւ առաքինութիւն է որ կ'ընէ բարեկամները» :

Բարեկամը մեր մէկ ուրիշ եսն է : Այս խօսքը այն Զենոնինն է, որ հիմնեց ստոյիկեանց իմաստասիրական աղանդը :

Ան որ մեծ քեցամի չէ, մեծ բարեկամ չէ.

Այսինքն ան որ կարող չէ աղէկատել, կարող չէ աղէկ սիրել :

Ան որ չի կրնար շատ փոյթ ունենալ իր թշնամիներէն վրէժ լուծելու, շատ հոգ չընէր նաեւ իր բարեկամներուն ծառայելու : — Պեսակաւն պառօստի մը պարապոյ ժամերուն հեղինակը շատ չափազանց կ'գտնէ այս առածը որ ատելութեան աստիճաններուն վրայ կ'շափէ բարեկամութեան աստիճաններ : Որոշենք, կ'ըսէ ան, ծայրայեղութիւնները որոնց մէջ կրքերը կրնան մեղքէնել, վառածեցնել, եւ իմաստուն ու խորհրդածեալ կապակցութեան մը հետեւութիւնները : Բարեկամութիւնն այս վերջին տեսակէն միայն ըլլալու է : Եթէ բարեկամութիւնը կիրք ըլլար, պիտի դադրէր ըլլալէ այնքան յարգելի ու այնքան պատկառելի որքան է. պիտի ունենար բոլոր վտանգները սէրին որ, ատելութեան ու վրէժխնդրութեան չափ թերութիւններ գործել կուտայ : Աստուած մեզ պահէ չափազանց սիրելէ ինչպէս եւ չափազանց ատելէ : Մեր մէջ ալ ժողովրդական առածը կ'ըսէ.

«Շատ մի՛ ատեր, սիրել կայ. շատ մի՛ սիրեր, ատել կայ» :

Այսու ամենայնիւ՝ պէտք է աղէկ սիրել մինչեւ աստիճան մը, մարդուն սիրտն այս զգացումին պէտք ունի, եւ այս զգացումը բարիք կ'ընէ մեր մտքին, երբ գայն բնաւ չի կուրցներ : Բայց ատելութեան ու վրէժխնդրութեան փափաքը մեզ միմիայն կ'տագնապեն ու կ'տառապեցնեն : Երջանիկ է մարդ բնաւ չատելովը. բայց իմաստուն կերպով մը սիրած ատեն ո՛չ ապաքէն կրնանք

եռանդուն կերպով ծառայել մեր բարեկամներուն, եւ անոնց օգտակար հանդիսացող գործերուն մէջ դնել աւելի ոգեւորութիւն, հետեւանք, տոկունութիւն իսկ: Պէտք է ոմանց համար անգութ ըլլալ անոր համար որ այլոց նկատմամբ գթասիրտ ենք: Իմ համար կ'յայտարարեմ թէ ես տկար թշնամի մ'եմ. ոչ միմիայն ուժովս այլ եւ դիտումովս. թէպէտ եւ ըլլամ չափազանց ջերմեռանդ եւ չափազանց էական բարեկամ մը»:

Բարեկամ մինչեւ խորանցներուն քով:

Այսինքն բարեկամ ամէն բանի մէջ որ կրօնքին հակառակ չէ. ըսել է:

Այս առածը որ Ուլուժէլէն եւ Պլուտարքոսէն յիշատակուած է, Պէրեկլէսի մէկ պատասխանն է ուղղեալ իր բարեկամներէն միոյն որ կ'ստիպէր զայն իրեն նպաստաւոր սուտ երդում մ'ընելու, վաղնջենի սովորութեանց վրայ հիմնուած երդում մը, ձեռքը խորանի մը վրայ դրած:

Ֆրանսուա Ա. այս օրինակ պարագայի մը մէջ ի գործ դրաւ, աւելի ազնուական կերպով մը, սոյն առածը, 1534 տարին էր. գրեց Անգլիոյ Թագաւորին, Հէնրիկոս Բ.ի, որ իրեն խորհուրդ կուտար բաժնուիլ Հռովմէական եկեղեցիէն ինչպէս ինք ալ բաժնուած էր. ես ձեռք բարեկամն եմ. բայց մինչեւ խորանցներ:

(Շար.)

ԱՐՄԷՆ

## ԲԵԼԵՈՒ ԻՆՉԱՒԷՍ ԿՐ ԽԱՍՆԻՈՒՆ

(Սառնակոյտին վրայէն թէ տակէն)


(Շարունակութիւն 44րդ թիւէն եւ վերջ)

Ինչպէս տեսանք, մինչեւ հիմա կատարուած փորձերը կը ցուցնեն թէ սառնակոյտին վրայէն բալխիւրով կամ օդապարիկով մը անցնիլը անիրականալի ծրագիր մըն է. ուրեմն երկու միջոց կը մնայ մարդուն բելեռէ հասնելու համար. սառնակոյտին մէջէն երթալ եւ կամ տակէն անցնիլ, այսինքն սառնարեկ նաւ մը հնարել եւ կամ ընդծովեայ նաւերու դիմել:

Սառնարեկ նաւը կարող է բռնի ուժով սառի կոյտերուն մէջէն

ճամբայ մը պեղել իրեն, Ռուս ծովակալ Մաքարով յաջողած է իրականացնել այդպիսի նաւու մը շինութիւնը. իր ծրագրով կառուցուած շոգենաւն գրեթէ պողպատի կոյտ մըն է իրարմէ բոլորովին անջատ խցաբաժիններու զատուած, երբ մնասուելով ջուր առնէ, այդ բաժանումներէն մին կը լեցուի միայն եւ շոգենաւը կը շարունակէ իր ճամբան առանց նեղուելու:

Մաքարովի յղացումը՝ նանդէնինէն կը տարբերի սա՛ կէտով որ առաջինը ամենագորաւոր մեքենայով մը օժտուած՝ յարձակողական գործիք մըն է, մինչդեռ Նորվեկիացիին նաւը սառերուն դէմ



Սառույցները խորտակող երմաք շոգենաւը

չկրնար կռուելու ելլել, այլ միայն կարող է ինքզինքը պաշտպանել անոնց դէմ. Ֆրամ առանց մնասուելու կը տոկար սոսկալի ընդհարումներու, սակայն ինք չէր կրնար սառնակոյտին վրայ յարձակելով խորտակել զանոնք: Մաքարովի նաւն, տեսակ մը ռումբ էր որ կը խորտակէր եւ ինք պաշտպանուած կը մնար. Երմաք դրուած էր անունը ի յիշատակ այն քաջարի խաղախին որ Սիպերիան յաղթահարեց:

Իր նաւը փորձելու համար Մաքարով՝ ձմեռները Քրօնշտատի նաւահանգիստը գոցող սառնակոյտերն ընտրեց: Ատիկա Մարտին

կը պատահի եւ ամբողջ Ֆինլանտայի ծոցը կը ծածկուի բիւրեղեայ ծանր ծածկոցով մը, այնքա՛ն ամուր եւ այնքա՛ն թանձր է այդ սառնակոյտն որ խումբերով ձկնորսներ կուգան գիւղականներ կը հաստատեն վրան: Երմա՛մ առանց դժուարութեան հասաւ ծոցին բերանն՝ ուր սառին թանձրութիւնը 60—80 սանդիմէթր էր եւ, ինչպէս որ դանակը կը կտրէ պանիրն, անցաւ այդ սառին մէջէն եւ ո՛չ մէկ ցնցում կրելով մինչեւ որ կանգ առաւ 2—3 մէթր բարձր սառնակոյտերու առջեւ: Հոս կռիւին ձեւը կը փոխուի: Երմաք հարուածներ կուտայ իր ամրաշէն ասպանդակով այդ սառերուն, եթէ առաջին հարուածին չփշրուին անոնք, ետ կ'երթայ նոր ոյժ առնելու համար եւ կրկին կը խոյանայ սառնակոյտին վրայ, որ այլ եւս շատ քիչ անգամ կրնայ դիմանալ: Յաղթութիւնը կատարեալ է ա՛լ. Երմա՛մ 7 մէթր թանձրութիւն ունեցող վերջին սառնակոյտն ալ խորտակելէ վերջ կը մտնէ Քրօնշդատի նաւա-հանգիստն:

Սոյն նախափորձէն քանի մը օր ետքը, ուր Երմա՛մի կարողութիւնը կ'ապացուցանէր, Ֆինլանտի ծոցին միւս եզերքին վրայ 16 շողենաւներ սառերու մէջ բռնուած էին եւ կը վախցուէր որ ընկղմէին: Անմիջապէս ազատարար նաւը մեկնեցաւ ու եկաւ ասպարէզ կարդալ 7 մէթր թանձրութեամբ սառնակոյտին դէմ: Բոլոր արագութեամբը Երմա՛մ եկաւ զարնուեցաւ այդ սառէ պարիսպին. բաղխումն այնքան ուժգին էր որ սառնակոյտին մէկ մասը փսոր փսոր եղած խորտակուեցաւ եւ նաւերէն մին ազատեցաւ: Ուրիշ երեք նաւեր անմիջական վտանգի մը տակ կը գըտնուին, Երմա՛մ տասնեւչորս անգամ յարձակեցաւ զանոնք բանտարկող սառերուն դէմ. հազիւ քանի մը հարիւր մէթր հեռու էր անոնցմէ երբ վրայ հասաւ գիշերը, բեւեռային երկար ու խաւար գիշերն. անմիջապէս վառեցան ելեքտրական կանթեղներն և սառերուն վրայ ցոլացող այդ արուեստակեալ լուսնային գիշերին մէջ Երմա՛մ շարունակեց իր ազատարարի գործն: Քանի մը շարթուան մէջ 82 նաւեր փրկեց ան, անմիջական ահռելի մահէ մը ազատելով հարիւրաւոր նաւազներ:

Այս յաջողութիւններէն քաջալերուած, Ռուս ծովակալը գնաց յաջորդ գարնան չափուիլ Սրիճպէրկի բեւեռային սառնակոյտերուն հետ: Երեւակայեցէք սառէ պատ մը 20 մէթր բարձրութեամբ եւ երբեմն ա՛լ աւելի: Երմա՛մ սկսաւ կռուիլ, երբեմն ամբողջ արագութիւնովը սառնակոյտին վրայ իյնալով կը խորտակէր զայն. երբեմն կը քշէր ան եւ ուրիշ սառնակոյտերու զարնել տալով կը խորտակէր: Եւ յաղթական այս կռիւներուն մէջ, անդադար կը յառաջանար, թէ՛ և դանդաղօրէն, օրական 3 քիլոմէթր:

Անգամ մը ժայռի պէս կարծր սառնակոյտ մը Երմաֆի կողին վրայ ինկաւ եւ պողպատէ տախտակներէն մին խորտակուեցաւ, ուրիշ ո՛ր եւ է նաւ անմիջապէս կ'ընկղմէր. Երմաֆի խցիկներէն մին ջուրով լեցուեցաւ եւ արկածն ուրիշ արգելէնք չունեցաւ: Քանի մը օր նորոգութենէ վերջը նաւն իր գործին կ'սկսէր: Ուրիշ անգամ մը սառերը փոխելով իրաց կացութիւնը, եւ ուզելով վրէժ լուծել, իրենց կարգին յարձակողականի սկսան եւ չորս կողմերէն եկան զարնուիլ նաւուն կողերուն: Երմաֆ յաղթական ելաւ այս կռիւէն ալ, առանց ամենափոքր վնասի:



Բեւեռ հասնելու համար երեւակայեալ ընդծովեայ նաւ մը

Իր այս ընթացքը շարունակելով Ռուս ծովակալին նաւը պիտի կրնայ ուրեմն բեւեռ հասնիլ, քանի որ կարող է ամենաբարձր սառերուն մէջէն իսկ ճամբայ մը պեղել իրեն՝ թէեւ դանդաղօրէն՝ բայց միշտ վստահութեամբ:

Սակայն, հոս խնդիր մը կը ծագի: Երմաֆ օրական ածուխի ահագին մթերք մը կ'սպառէ, եւ հիմակուան վիճակին մէջ չէ կարող մինչեւ բեւեռ հասնելու չափ բաւող ածուխի պաշար մը ամբարեւելի կողերուն մէջ:

Բեւեռ հասնելու ծրագիրներուն մէջ ամէնէն աւելի երեւակայութիւնը խաբող միջոցներէն մին է ընդծովեայ նաւերու գործածութիւնը: Քանի մը տարի առաջ Ֆրանսացի ծովային սպայ մը, պարոն սը Մօնթիլ, Բարիզի Աշխարհագրական ընկերութեան կը ներկայացնէր յիշատակագիր մը՝ սառնակոյտին տակէն անցնիլ եւ Բեւեռ հասնելու միջոցներուն վրայ: Սակայն այդ գիտական ընկերութիւնը չուզելով պատասխանատուութեան մը տակ մտնել, մերժեց խորհրդակցութեան դնել զայն:

Վիէննայի մէջ, արհիդուքսի մը ներկայութեանը, Տօքթ. Անգլինձ-Քէմբ խօսեցաւ նոյն նիւթին վրայ: Ընդծովեայներու համար ամենուրեք գիւրութիւն իայ սառնակոյտերու տակէն ճամբորդելու համար, որովհետեւ շատ խորը ընկղմելու պէտք չունին: 30—35 մէթր կը բաւէ: Միւս կողմէ, ամառները՝ սառնակոյտերը կը խորտակուին և տեղ տեղ ծակեր բաց կը մնայ, որով ընդծովեայները կրնան ջուրին երեսն ելլել եւ օդ առնել: Արդէն ընդծովեայներն այնպէս մը շինուած պիտի ըլլան որ 15 ժամ պէտք չպիտի ունենան ջուրին երեսն ելլելու, շնորհիւ նոր դրութեան մը որով շնչառութենէ գոյացած ածխական թթուն կը ծծուի եւ թթուածին կ'արտադրուի:

Թարգ. Զ. Ն. Պէրոթէրեան

## ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԱԻԱՌԻՆ ՄԷՋ

(ՈՒՍՈՒՄ ՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Գ.

(Շարունակութիւն 44րդ թիւէն եւ վերջ)

Կը մնայ միայն դպրոցը եւ իր բարերար հակազդեցութիւնն՝ իբրեւ վերջին դարման եւ վերջնական հանգրուան մեր կրթական բոլոր յուսախաբութիւններուն:

Մէկ քանի մասնաւոր վարժարաններէն ու գօլէճներէն դուրս, մեր բոլոր վարժարաններն ապարդիւն չըլաններ բոլորած են, տիրացուներու, պատուելիներու և իմաստակներու ամբողջ սե-

րունդ մ'արտադրելով, որոնց մէջ ի գուր պիտի փնտռես մէկը, որ ոտքը դպրոցին սեմէն դուրս նետելուն պէս՝ փոխանակ «թռչուն»ին ու «թիթեռնիկ»ին ձօնուած յաւերժական յանկերգը կրկնելու, քիչ մ'ալ իրական կեանքով հետաքրքրուէր: Իսկ անհատական եւ օտար վարժարանները՝ տոհմային կրթութեան տեսակէտով, վերջիններուն անպատեհութիւններն ալ հաշուելով — բացառութիւններ են արդէն. ինչպէս բացառութիւններ են նաեւ գաւառական միւս վարժարաններէն դուրս եկող փոքրաթիւ ընթացաւարտները, որոնք իրենց ինքնաշխատութեան կը պարօրին ինչ դիրք որ կրցած են գրաւել:

Գիտութեան անո՛ւնն իսկ չա՛տ ուչ լսուած է այս կողմերը, եւ կրթ. յայտագրերը վերացական ուսումներու տեղ տուած են մինչեւ վերջերս, որ ատեն առնուած քայլերն ալ բնականօրէն շատ աննպատակ անցած են: Փաւառական վարժարանները, ժամանակագրական կարգով, նախ հաստատուած են, եկեղեցիները չէնցնող դպիրներ հասցնելու համար, յետոյ՝ հայկաբանութեան մօտէն բռնուած պատուելիներու դասակարգ մ'արտադրած են, որոնցմէ ետքը կուգան սկեպտիկ իմաստակները, թերի եւ սխալ ուսուցման հետեւանքներուն իբրեւ մարմնացում:

Հիմակուան մեր վարժարաններուն մէջ, գիտական դասերն ա՛յնպէս մը կ'աւանդուին՝ ինչպէս, օրինակի համար, Արտասանութիւնը, Պատմութիւնը, գոց ընել տալու անդրջըհեղեղեան մեթոտին համաձայն: Աշակերտներուն յիշողութիւնը կը մտրակուի, ի վնաս դատողութեան, առա՛նց որուն, սո՛ւի ձայնաւոր քննութեանց պահուն ռամիկին ականջը պատրող Ֆոֆօկրաֆներ կը պատրաստենք գործնական կեանքի մէջ լռելու դատապարտուած: Առանց քարտէսի՝ աշխարհագրութիւն, առա՛նց գործնական փորձերու՝ թուաբանութիւն, երկրաչափութիւն եւ առա՛նց չօշափելի նիւթերու եւ գործիքներու՝ բնապատմութիւն ու բնագիտութիւն կ'աւանդուի արդէն հարիւրաւոր վարժարաններու մէջ: Զգենք թէ՛ շատ տեղեր ալ, եթէ կան քարտէսներ, գործիքներ եւայլն, բոլոր ատոնք պատերը զարդարելու եւ այցելուներուն՝ ի ցոյց դրուելու միայն կը գործածուին: Եւ ասոնցմէ տարբեր, ինչ պիտի յուսայինք արդէն երբ հաստատուած ճշմարտութիւն մըն է այսօր թէ՛ գիտութեան ուսուցիչ չունինք, մէկ խօսքով:

Վերջացնելէ առաջ, ըսենք թէ՛ մեր սոյն ուսումնասիրութիւնը չա՛տ համառօտ յատակագծի մը համաձայն պատրաստեցինք, մասնաւորաբար շեշտելու համար՝ գիտական ծանօթութեանց պակասը՝ գաւառի բոլոր դասակարգներուն մէջ եւ ասոր

ապացոյցներն առնելով գեղջուկին, արհեստաւորին, վաճառականին, գրամատէրին եւ ուսեալներուն կեանքէն ու գործերէն և ցոյց տալով դարմաններն ալ: Նիւթին բեղունութիւնը, իր մանրամասն ճիւղաւորումներուն բովանդակ շրջագծին մէջ նկատելով, ենթադրուածէն շատ աւելի ընդարձակ քննադատութիւններու ատաղձ կրնայ հայթայթել: Մենք միայն անմիջական պէտքը հիմ բռնելով՝ անոր վրայ ծանրացանք, զօրաւոր փաստեր կցելով իւրաքանչիւր եզրակացութեան, Հարեանցի ակնարկ մը նետեցինք բոլոր ա՛յն իրողութիւններուն վրայ, որոնք ինքնին խիստ կարեւոր ու կենսական են, և որոնց պարբերաբար անդրադառնալու առիթ պիտի ունենանք արդէն, ի՛նչ որ հիմակուհիմա մեր ծրագրէն դուրս էր ձգուած: Ընդհանուր էին մեր եզրակացութիւնները, որոնց մէջ՝ բացառիկ դէմքերը սո՛սկ բացառութիւն համարուած են և ո՛չ աւելին:

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

Պ Ե Ր Զ

## ՊԱՏԼԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Փ Ո Ք Ր Ի Կ Բ Թ Ո Ւ Կ Ը

(ՍԻՍԱՆԳՍԱԼԷՊ)

Կին մը շատ կը փափաքէր զաւակ մը ունենալ, բայց տեսնելով որ իր բաղձանքը չիրագործուիր, պառաւ վհուկի մը դիմեց խորհուրդ հարցնելու:

— Զաւակ մը ունենալ կը տենշամ, ի՛նչ միջոցներով կրնամ իրականացնել փափաքս:

— Շատ դժուար բան մը չէ՛ ատ, պատասխանեց վհուկը. ահաւասիկ գարիի հունտ մը՝ որ ո՛չ դաշտերուն մէջ բուսած՝ և ոչ ալ հաւերուն կերած տեսակէն է: Ծաղկամանի մը մէջ դի՛ր զայն, ու արդիւնքը պիտի տեսնաս:

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, Կինը՝ անատորէն վարձատրելով զայն:

Ու տուն վերադառնալով տնկեց գարիի հունտը:

Ու անմիջապէս աղուոր ծաղիկ մը ընծիւղելով՝ նլացաւ հողէն, թարմ, ոսկեգոյն կակաչի մը նման, բայց դեռ կոկոն:

Կինը, հիանքանչ, բացագանչեց:

— Ի՞նչ սիրուն ծաղիկ...

Ու, դէպ ի ան հակելով, համբուրեց անոր թոցավաք ու դեզին թերթերը... այլ նոյն վայրկեանին ծաղիկը բացուեցաւ: Հիմա կը տեսնուէր թէ ճշմարիտ կակաչ մըն էր ան, բայց խորը, հոն ուր կանանչ էր, փոքրիկ աղջնակ մը նստած էր, նրբենի ու սխրալի, չա՛տ շատ բթամասէ մը քիչ մը մեծ. ասոր համար Բըթուկ, կոչուեցաւ:

Ան, ընկոյզի չնարակուած կճեպ մը իբր օրօրոց ընդունեցաւ, իբր սաւան՝ մանիչակի տերեւներ, ու իբր ծածկոց՝ վարդի թերթ մը: Գիշերը հոն քնացաւ, բայց ցիւրեկը կը խաղար այն սեղանին վրայ: Խնձ կիներ ջուրով լի սկաւառիկ մը կը դնէր՝ ծաղիկներու շղթայաւորումէ մը շուրջատուած: Սկաւառակին ջուրին վրայ կը լողար կակաչի խոշոր տերեւ մը ուր նստելով պզտիկ Բթուկը, կրնար մէկ եզերքէն միւսը նաւարկել, ձիւքի երկու ճերմակ ծաւերու միջոցաւ, զորս կրնար իբր թիակ գործածել: Այսպէս զմայելի տեսարան մը կ'ընծայէր. և յետոյ, անիկա երգել ալ գիտէր, աննման ձայնով մը՝ անոյշ ու այնքան քաղցրահնչիւն:

Գիշեր մը, մինչ հոն կը քնանար, անպիտան գորտ մը սպըրդեցաւ անոր մօտ: Այս չարաչուք, այլանդակ ու տամուկ կենդանին անոր անկողնին քով գնաց:

— Ինչքա՛ն սիրուն կին մը իմ աղուն համար...

Եւ ընկոյզին կեղեւը առնելով՝ դուրս ելաւ պարտէզէն:

Հոն կը հոսէր լայն առու մը՝ որուն մէկ եզերքը կը հասնէր մինչեւ ճախճախուտք մը: Այս ճախինին մէջն էր որ կ'ապրէր գորտը՝ իր աղուն հետ, որ, ան ալ, կատարելապէս իր հօրը կը նմանէր, ազտոտ ու զազրելի: Գորտը սկսաւ կռկռալ՝ տեսնելով հիանալի պզտիկ աղջիկը:

— Ատչափ շատ բարձր մի՛ խօսիր: պիտի արթնցունեն զինքը, քսաւ ծեր գորտը: Կրնայ ըլլալ որ փախի քովերնուք, ինչո՞ւ որ կտրապին աղուամազին չափ թերթեւ է: Մենք անիկա շատ լայն տերեւի մը վրայ պիտի տեղաւորենք առուին մէջտեղը: Այսպէս կը զգիւնաւորով պիտի չկրնայ ինքզինքը ազատել: Այս ժամանակաւ միջոցին մէջ, ճախինին խորը պիտի պատնշուենք այն սենեակը՝ որ ձեզի իբր բնակարան պիտի ծառայէ:

Յետոյ գորտը ջուրը ցատկեց ընտրելու համար ցողունով մեծ տերեւ մը, և հոն տեղաւորեց կճեպը՝ ուք պզտիկ Բթուկը կը քնանար:

Երբ հէք փոքրիկը, յաջորդ առտու արթննալով տեսաւ թէ ո՛ւր կը գտնուէր, սկսաւ դառնօրէն լալ. որովհետեւ շատ ցաւաւ գին կացութեան մը մէջ գտաւ ինքզինքը, և ատկէ ազատելու որ և է յոյս մը. հաւանականութիւն մը չկար:

Ծեր գորտը ճահիճին տակ սենեակը եղէգներով և պզտիկ դեղին ծաղիկներով զարդարելէ ետքը, իր տղուն հետ լողաց դէպ ի այն տերեւը ուր կը գտնուէր Բթուկը, զայն սենեակ փոխադրելու և աղւոր անկողնին մէջ դնելու մտադրութեամբ:

— Բեզի տղուս կը ներկայացնեմ, քու ապագայ էրկանդ: Շքեղ բնակարան մը կը պատրաստեմ կոր ձեր երկուքին համար:

Ու դարձեալ ջուրին մէջ միւրճուեցաւ, երբ իր տղան կը կռկռար:

Ասդին, պզտիկ Բթուկը վիշտէն կուլար, մինաւորիկ՝ կանանչ տերեւին վրայ, կուլա՛ւ, ու դառնօրէն կը մտածէր զազրելի գորտին ու իր ամուսնութեանը վրայ:



Պզտիկ ձուկերը լսած էին ինչ որ ըսած էր գորտը, ու իրենց նախանձը գրգռեցաւ՝ զանիկա տեսնելու համար: Առաջին ակնարկով, այնքա՛ն սիրուն գտան որ, անպիտան գորտի մը հետ ամուսնանալու դժբախտութիւնը կռեցին: Այս ամուսնութիւնը երբե՛ք տեղի պիտի չունենա՛ր: Տերեւին շուրջը ժողովուելով՝ անոր կապը փրցուցին իրենց ակռաներով, ու ան ատեն տերեւը այնքան հեռունները տարաւ պզտիկը, որ ա՛լ գորտերը անոր դարձին չսպասեցին:

Բթուկը շատ մը տեղերէ անցաւ, ու մացառներուն թռչունները անոր գեղեցկութիւնը կ'երգէին: Տերեւը, ծածանելով միշտ

աւելի հեռուն, աւելի հեռուն, կատարեալ ճամբորդութեան մը երեւոյթը կ'ընծայէր:

Ճամբան, ճերմակ սիրուն թիթեռնիկ մը սկսաւ թռչտիլ անոր շուրջը ու վերջապէս եկաւ թերթին վրայ հանգչիլ, չկրնալով իր հիացումը զսպել՝ մանկամարդ աղջիկին մասին:

Բթուկ, կատարելապէս գոհ չար գորտէն փախչելուն համար, կ'ուրախանար բնութեան շքեղանքին ու ջուրին տեսքին վրայ: Հանեց իր գօտին, ու մէկ ծայրը թիթեռնիկին, եւ միւսն ալ՝ տերեւին կապեց և աւելի արագ ընթացաւ:



Յանկարծ մեծ ջորեակ մը անցաւ, ու, նշմարելով պզտիկ աղջիկը, իր տոտիկներովը շուրջպատելով անոր փափուկ մարմինը, անոր հետ ծառի մը վրայ թռաւ: Իսկ տերեւը, չարունակեց իր էջքը գետէն վար՝ թիթեռնիկին հետ, որ չէր կրնար ինքզինքը ազատել կապանքէն:

Աստուած գիտէ թէ որքա՞ն մեծ պակուցումի մը ենթարկուեցաւ՝ երբ ջորեակը զանիկա ծառին վրայ տարաւ: Եւ սակայն անիկա աւելի կը մեղքնար ճերմակ աղւոր թիթեռնիկին վրայ, որ տերեւին կապուած էր, և որ անօթութենէ պիտի մեռնէր անպատճառ, եթէ երբեք հնարքով մը չազատեր, բայց ջորեակին հոգը չէր այս ամէնը. ծառին ամէնէն մեծ տերեւին վրայ նստեցուց աղջնակը, ծաղիկներու հոյզով պատուեց զայն, ու թէպէտ

Ջորեակի մը չէր նմանէր, սակայն անոր գեղեցկութեանը հազար պատիւներ ըրաւ:

Անմիջապէս միւս Ջորեակները որոնք միեւնոյն ծառին վրայ կը բնակէին, անոր այցելութեան եկան: Օրիորդ Ջորեակները, անոր ի տես, կ'ըսէին.

— Ի՞նչ վիշտ, երկու սրունք ունի միայն...

— Բողկուկ ալ չունի, աւելցուց անոնցմէ մէկը, անիկա վտիտ ու նուրբ է, մարդու մը կը նմանի ան: Օ՛հ, որքա՛ն տղեղ է...:

Եւ սակայն պզտիկ Բթուկը սքանչելի ու անթերի գեղեցկութիւն մը ունէր. բայց, այն Ջորեակը՝ որ՝ աղուորի տեղ դասելով տերեւին վրայէն առած բերած էր զայն, ուրիշներուն անսալով, ինք ալ համոզուեցաւ անոր տգեղութեանը, եւ չուղեց իր քով պահել: Ծառէն իջեցուցին զայն, ու զատկածաղկի մը վրայ դնելով իր սանձարձակութիւնը իրեն վերադարձուց: Պզտիկը սկսաւ լալ, անոր համար որ Ջորեակները իր տգեղութիւնը պարսաւած էին ու զինքը այս վիճակին մէջ ձգած էին, և սակայն անիկա սխրալի էր:

Թարգմ. ՎԱՀԷ  
(Շար.)

ԱՆՏԵՐՍԸՆ

### ԱՊՊԱՏՏԱՆԱՐԱՆԻ ԺԱՅՈՒՇ

Այրիին բնակարանը կիրճէն տասը մղոն հեռու էր, և իրենինէն աւելի մօտ մարդկային բնակութիւն մը չկար: Զեռնարկած էր երկայն ճամբորդութեան մը, իր հետ տանելով երկու տարեկան մէկհատիկ գաւակը:

Առաւօտուն երբ այրին մեկնեցաւ իր բնակարանէն, գեղածիծաղ օր մը կը խոստանար: Բայց կէսօրէ տուաջ օդին մէջ յանկարծակի փոփոխութիւն մը տեղի ունեցաւ: Հիւսիսային կողմի երկինքը կը մթափնէր և սպառնալից կը դառնար: Ամպի կոյտեր կը հանգչէին բլուրներուն վրայ: Յանկարծ հովի պայթումներ սկսան սուլել ժայռերու մէջ, և մրրկել լճին երեսը մեծ փոթորիկներով:

Հովին յաջորդեց անձրեւ, անձրեւին՝ կարկուտ, և կարկուտին՝ ձիւնի տեղատարափ մը: Մայիսի ամիսն էր՝ որովհետեւ տակաւին այդ փոթորիկը կը յիշուի իբրեւ «Մայիսի մեծ փոթորիկը»: Զմեռուան վայրագ օր մը երբէք դիտած չէր ձիւնի փաթիլներու այնքան արագ իյնալը, կամ պտուկիլը մոլեգնութեամբ կիրճին:

մէջ, լեցնելով ամէն ծակ և ճերմկցնելով ամէն ժայռ:

Յողնած, թրջած և պաղած, այրին զաւկին հետ այդ կիրճը հասաւ: Գիտէր թէ մղոն մը անդին լեռնային հիւղակ մը կար որ կրնար ապաստանարան ըլլալ, բայց այն վայրկեանին որ փորձեց դիմագրաւել կիրճին մէջէն խուժող ձիւնի փոթորիկին, բոլոր յոյսերը ի զուր ելաւ: Բնակարանը վերադառնալ հաւասարապէս անկարելի էր: Պէտք էր ապաստանարան մը գտնել: Վայրի կատուի մը կամ աղուէսի մը որջը սիրով պիտի ընդունէր:

Գիշ մը ատեն թափառելէ վերջ վիթխարի կրանիթեայ բեկորներու վրայ որոնց խարխիւր կ'եզերէին վայրահակ գահաւանդներ, վերջապէս ապաստանարան մը գտաւ: Կծկտեցաւ ցցուն ապառաժի մը տակ, և կը սեղմէր զաւակը դողդոջուն կուրծքին վրայ:

Փոթորիկը կը շարունակէր սաստկանալ: Ձիւնը բարդիբարդ կը դիզուէր գլխուն վրայ: Ժամեր կ'անցնէին: Սաստիկ ցուրտ եղաւ: Իրիկունը կը մօտենար: Լէյրիին սիրտը կը ճմլուէր վախէն և անձկութենէն:

Իր զաւակը, մէկ հատիկ զաւակն էր, հոգածութեան միակ առարկան: Փաթթեց զայն ցփսիին մէջ: Բայց հէք արարածը խեղճուկ հագուած էր, և ցփսին բարակ ու պատռտած էր:

Այրին աղքատ էր, իր հագուստը հաղիւ կրնար պաշտպանել զինքը այդպիսի գիշերուան մը կրծող ցուրտէն: Բայց, ինչ որ ալ պատահէր իրեն, զաւակը պաշտպանուելու էր: Ձիւնը յորձանապտոյտ կը մտնէր ալքերուն մէջ, որ միայն իրենց հաղիւ խեղճ ապաստանարան մը կ'ընծայէր:

Գիշերը վրայ հասաւ: Խեղճ մայրը այն ատեն մերկացաւ գրեթէ բոլոր հագուստներէն և զանոնք փաթտեց իր զաւկին, զոր վերջապէս, յուսահատօրէն դրաւ ժայռին մէկ խորունկ ծերպին մէջ, ցախերու և պտերներու մէջտեղ:

Եւ հիմա որոշեց, ինչ որ ալ պատահելու ըլլայ, դիմագրաւել փոթորիկին և բնակարանը վերադառնալ մանուկին օգնութիւն գտնելու և կամ կորսուելու այդ փորձին մէջ: Սեղմելով մանուկը սրտին վրայ, և երեսը ծածկելով համբոյրներով ու արցունքներով, դրաւ զայն մեղմիւ քնանալու, և ինք խոյացաւ դէպ ի ձիւնադէզը:

Այդ փոթորիկի գիշերին յաջորդեց խաղաղիկ առաւօտ մը: Արեւը կը փայլէր ջինջ կապոյտ երկնքէն, և մէգի պարոյրներ կը կախուէին լեռներու կատարներու մէջ, մինչ հագարաւոր ջրվէժներ կը վազէին իրենց կողերէն:

Մութ կերպարանքներ, որոնք հեռուէն կը տեսնուէին գետնի

սպիտակութենէն, երկայն ցողերով կը խուզարկէին, քննելով ամէն ծերպ կիրճին մօտ:

Անոնք գիւղացիներ էին որոնք կը փնտռէին այրին և իր զաւակը: Կիրճը հասած էին: Հովիւներէն մին աղաղակ մը բարձրացուց երբ տեսաւ գոյնզգոյն վերարկուի մը կտորը ձիւնին մէջ: Այրին մեռած գտեր էին, և բազուկները տարածած իբր թէ օգնութիւն կը հայցէր: Կէսօրէ առաջ տղեկը գտան աղաղակներէն: Ան ապահով էր ժայռի ծերպին մէջ: Լեյք այրիին զաւակին սիրոյն պատմութիւնը կարդացուեցաւ այն ամէն լեզուով որ ամէնը կը հասկնան:

Շատ արցունքներ թափուեցան, շատ մը սիրոյ հառաչներ արձակուեցան վշտաբեկ սրտերէ, երբ այդ իրիկունը, ծերունազարդ երեցը ժողովեց գիւղացիները այդ սգով ամայացած տան մէջ, և աղօթքներով ու հայրական յորդորներով, ջանաց օգտակար ընել տխուր դէպքը իրենց հոգիներուն:

Կէս դարէ աւելի անցեր էր: Այդ Աստուծոյ հաւատարիմ և ծերունի մարդը շատոնց ամփոփուած էր հայրերուն քովը, թէև իր յիշատակը տակաւին կը դեգերէր շատ մը մենաւոր հովիտներու մէջ, թռուներու միջեւ այն ծնողքներուն որոնք ինք մկրտած էր: Իր զաւակը, որուն մաղերը տարիքէն ճերմկցած էին, կը քարոզէր կիրակի մը մեծ քաղաքներէ միոյն մէջ:

Քարոզին նիւթն էր Քրիստոսի սէրը: Լուսաբանելով ինքնազոհ բնութիւնը որ «Սէրը իրենին մէջ չի փնտռեր», մէջ բերու պատմութիւնը, վերի այրիին զոր տղայութեան ատեն ճանչցած էր, և հարցուց «Եթէ այդ զաւակը հիմա ողջ է, ի՞նչ պիտի խորհիք իր սրտին նկատմամբ, եթէ խանդաղատանք մը չի տածեր մօրը յիշատակին համար, և եթէ ի տես անոր թերթիկած ցրտի սին, զոր փաթթած էր անոր շուրջը՝ կեանքը ազատելու համար թէեւ իրենը կը կորսնցնէր չի լեցուիր անբացատրելի երախտագիտութեամբ ու սիրով: Սակայն ի՞նչպիսի սիրտեր ունենալու էք դուք, ունկնդիրներս, եթէ ի յիշատակ ձեր Փրկչին ինքնազոհութեանը չէք զգար անոնց բոցավառիլը խորունկ և երկրպագու երախտագիտութեամբ »:

Քանի մը օր վերջ, լուր ղրկուեցաւ այս եկեղեցականին մահամերձ մարդէ մը որ կը խնդրէր տեսնել զինքը: Խնդիրքը փութով կատարուեցաւ: Հիւանդը բռնեց կրօնաւորին ձեռքէն և ուշի ուշով երեսը նայելով ըսաւ. «Դուն գիտ չես ճանչնար, բայց կը ճանչնամ ես քեզի, ինչպէս նաեւ քու հայրդ: Ես թափառող մը եղած եմ և այցելած երկրագնտի ամէն կողմերը: Քանի մը շաբաթ առաջ այս քաղաքը հասայ հիւանդ վիճակի մէջ: Անցեալ

կիրակի մտայ ձեր եկեղեցին, լսեցի այրիին և իր զաւակին պատմութիւնը ընելնիդ»։ Հոս ծերունի չուառին ձայնը կը դողդղար, յուզումէն գրեթէ շնչահեղձ էր, բայց սթափելով վայրկեան մը գոչեց. « Ես եմ այդ զաւակը » և սկսաւ լալ։


« Այո, շարունակեց, ես եմ այդ զաւակը, Երբէ՛ք, Երբէ՛ք չմոռցայ մօրս սէրը։ Աւելի աղէկ կ'ընէիք եթէ հարցնէիք թէ ինչպիսի սիրտ մը ունենալու էի եթէ զայն մոռցած ըլլայի։ Սիրելի, շատ սիրելի է ինձ անոր յիշատակը, և հիմա իմ միակ բաղձանքս է ամփոփել ոսկորներս իրենին քով հինաւուրց գերեզմանատունին մէջ բլուրներու մէջտեղը։

« Բայց, տէ՛ր, ինչ որ սիրտս կը ճմլէ և լեցնէ ամօթով, սա է թէ մինչեւ հիմա Երբէ՛ք ունեցած չէի Յիսուսի սէրը։ Ա՛ն ըսել տուաւ ձեզ այդ պատմութիւնը, հիմա կ'զգամ ադ։

« Օրհնեալ ըլլայ սիրելի մօրս սուրբ անունը որու յիշատակը կը փրկէ իմ հոգիս, ինչպէս իր կեանքը՝ ազատած էր իմինս »։

Թրգմ.

Մ. ԹԱԹԱՐԵԱՆ



## ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԳԷՇ ԸՆԿԵՐԻ

Օր մը փիլիսոփային մէկը պատանիի մը կը հանդիպի, որուն հետն էր իր անառակութիւնովը անուանի եղող ընկերը, Երբոր պատանին այնպիսի վատահամբաւ ընկեր մը ունենալուն վրայ կ'սկսի ամչնալ ու կարմրիլ։

— Քաջաւերուէ, զաւակս, կ'ըսէ փիլիսոփան, վրադ այս ամօթխածութիւնը տեսնելուս ուրախ եմ. բայց աւելի լաւ կ'ընես այնպիսի մարդոց հետ պտըտիլ, որոնց ընկերութեանը վրայ չամըչնաս, այլ պարծիս »։

## Ս Ա Կ Ա Ի Ա Ն Օ Ս

Գաղղիոյ Կարոլոս Ե. թագաւորն որ իմաստուն կոչուած է, այնպիսի գեղեցիկ խօսակցութիւն մը ունէր, որ լսողները զմայլելով կ'ունկնդրէին։ Կարոլոս, փոխանակ այս ձիրքով հպարտանալով շատախօս ըլլալու, սակաւախօս էր։ Օր մը, երբոր անոր խօսակցութիւնը մոտիկ ընդունեց զմայլած կ'ըսէին. « Մեծ կատարելութիւն է լաւ խօսիլ գիտնալն։ — Ճշմարիտ է պատասխանեց, բայց լուր գիտնալն եւս անկէց վար չմնար »։

## ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Քօնէրը. — Ագահութիւն. — Պարահանդէսը ի՞նչ տարի առաջ (Բանագող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը զիսմալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխտեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ռիլերմա եւ կայծակը. — Քաւն եւ . . . դարու ճաշ մը. — Կրօնքներու պատմութիւնը. — Այծեամի որսը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու անդ. — Նշանաւոր միականիներ. — Մխիթարական բաղը յոռետես բարեկամիս (Քասիմ). — Սրկըագործական Պատառիկներ. — Օգոտակար գիտելիքներ. — Ցաւին դարձանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչկերու առողջութիւնը. — Ակամոյ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը զանոց պարօնը. — Տոմարակնիդ, պարօնա՛յք. — Հինգ առ հարիւր տոկոս. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դաասաւան. — Թօթօ. — Դորնիշօնի երազը. — Մեղրալուսնի ճամբորդութիւն. — Մայր ու աղայ. — ԱԿՆՅԻ ՍԱՐԱՅ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Քաւն բարայո՛վ աշխարհիս ոսկին. — ԹԻՐԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒԱՐՃԱԼԻԲՆԵՐ եւայլն, եւայլն.

Գիճն է 5 Դահեկան. — Դաւառներ՝ թղթատրով 6 Դահեկան

Հանրագիտակի բոլոր Դորձակալներու ֆոլ

Ուղղակի մենէ հինգ հաս զնոդներուն վեցերորդ մը նուէր կը տրուի



REVUE DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

DE LA LITTÉRATURE

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամենէն ժողովրդական, Ամենէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅՐ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Բօնեքը. — Ագահութիւն. — Պարահանդեսը ի՞նչ տարի առաջ (Բանագող Լուրիւնեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխտեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ռիլերմա եւ կայծակը. — Բսան եւ ... դարու ճաշ մը. — Կրօնքներու պատմութիւնը. — Այծեամի որսը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու աեղ. — Նշանաւոր միականիներ. — Մխիթարական բուրբ յոռեան բարեկամիս (Քասիմ). — Սրկրագործական Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Ցաւին դարձանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը զանոց պարտեր. — Տոմսակնիդ, պարոնա՛յք. — Հինգ առ հարիւր տօկոս. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Բարնիշօնի երազը. — Մեղրալուտնի նամբորդութիւն. — Մայր ու տղայ. — ԱԿՆՑԻ ՍԱՐԱՆ ՄԸ. — Դիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Բսան բարայով աշխարհիս ոսկին. — ԹԻՐԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒՍՐՃԱԼԻԲՐԵՐ եւայլն, եւայլն:

Դիճն է 5 Դանեկան. — Դաւառներ՝ բղբասարով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաս գնողներուն վեցերորդ մը նուէր կը տուի